



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 09-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 06-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009 թվականի ապրիլի 21-ի «Դատական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 06-Լ որոշման հավելվածում նշված ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Հաստատել ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորի օգնականի N 19.5-19.7 պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների:

1.2. Հաստատել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի օգնականի N 29.11-29.12 պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների:

1.3. Հաստատել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի դատական նիստի քարտուղարի N 30.11-30.12 պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների:

1.4. Հավելվածի 19-րդ կետում «19.4» թիվը փոխարինել «19.7» թվով:

1.5. Հավելվածի 29-րդ կետում «29.10» թիվը փոխարինել «29.12» թվով:

1.6. Հավելվածի 30-րդ կետում «30.10» թիվը փոխարինել «30.12» թվով:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԱՎԱԳՅԱՆ

01 հոկտեմբերի 2012թ.

ք. Ստեփանակերտ